

Արագածոտնի մարզի Կարմրաշեն համայնքում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված Ապրիլյան քառօրյա պատերազմում զոհված զինծառայող Ռաֆիկ Չակոբյանի հիշատակին

19.01.2019

Հունվարի 19-ը Ապրիլյան քառօրյա պատերազմում Թալիշի մարտական դիրքերից մեկում զոհված զինծառայող Ռաֆիկ Չակոբյանի ծննդյան օրն է: Այսօր նա կդառնար 23 տարեկան:

Ռաֆիկ Չակոբյանը հատուկ զինվորական ծառայության մեկնելու համար հայրենիք էր վերադարձել Սանկտ Պետերբուրգից, բանակ էր զորակոչվել 2014 թվականին: Չորացրվելուն մնացել էր մեկ ամիս: Ռաֆիկ Չակոբյանը հերոսաբար պայքարել և զոհվել է՝ պաշտպանելով իրեն վստահված մարտական դիրքը:

Հարագատ գյուղում Ռաֆիկ Չակոբյանի հիշատակին նվիրված միջոցառմանը ներկա էին ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանը, ՀՀ ՉՈՒ անձնակազմի հետ տարվող աշխատանքների վարչության պետ, գեներալ-մայոր Ալեքսան Ալեքսանյանը, ՀՀ ՉՈՒ բարձրաստիճան սպաներ, ՀՀ Արագածոտնի մարզի զինվորական կոմիսար Անուշավան Ասատրյանը, ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչներ, Կարմրաշեն համայնքի ղեկավար Սամվել Թորոսյանը, հերոսի մայրը, հարազատները, ընկերներն ու համագյուղացիները:

Կարմրաշեն գյուղի միջնակարգ դպրոցի՝ Ռաֆիկ Չակոբյանի անունը կրող դասասենյակում տեղի ունեցավ բաց դաս, ապա ներկաներն այցելեցին Արցախյան պատերազմում զոհված կարմրաշենցիների հիշատակին կառուցված հուշահամալիր և ծաղիկներ խոնարհեցին Ռաֆիկ Չակոբյանի հուշաքարի մոտ:

Ռաֆիկ Չակոբյանի շիրմաքարի մոտ մատուցվեց հոգևորական ծես: «Կա մի ցավալի ու ծանր ճշմարտություն՝ հողը արյունով են պահում: Մենք խաղաղասեր, կյանքը գնահատող ու մարդուն կարևորող ժողովուրդ ենք: Մենք թոշվոր, նվաճող, ուրիշի հողին տիրացող չենք եղել: Ստացվել է այնպես, որ պատմության բոլոր դրվագներում ստիպված ենք եղել կռիվ տալ մեր իսկ հողի համար և երբ միամտաբար սուրը փոխարինել ենք գրչով՝ կորուստներ ենք կրել: Պետք է մշտապես հիշենք, թե ում շնորհիվ ենք ամուր կանգնած, թե ինչ հերոսների կյանքի գնով ենք մենք ապրում խաղաղ: Ես ուզում եմ, որ միշտ շարժվեք այն գիտակցումով, որ մեր հողն ու ջուրը պաշտպանողը, մեր երկիրը պահողը մենք ենք: Եվ եթե այդ գիտակցումով մենք առաջ գնանք հաստատ ունենալու ենք մեր երազանքների երկիրը՝ ազատ, անկախ, երջանիկ ու հզոր Հայաստանը: Ես խոնարհվում եմ մեր հողի ու ջրի, մեր երկրի համար կյանքը զոհասեղանին դրած բոլոր հերոսների շիրիմների առաջ: Ես ուզում եմ, որ այլևս ստիպված չլինենք ռազմի դաշտում նոր հերոսներ ունենալ: Ուզում եմ մեր վաղվա հերոսները լինեն գիտության, կրթության, մշակույթի և այլ ոլորտներում».- ասաց ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանը:

Հավերժ փառք հերոսների հիշատակին: